

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի հետևյալ թափուր պաշտոնը ժամանակավոր զբաղեցնելու մասին

արտաքին կապերի բաժնի պետ (ծածկագիր՝ 16/1 -2.2-8)

- 1) ապահովում է Կոմիտեի՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մասնակցությունը.
- 2) ապահովում է միջազգային համապատասխան կառույցների հետ համագործակցությունը պետական անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրերի մշակման գործընթացում.
- 3) ապահովում է Կոմիտեի մասնակցությունը անտառային ոլորտում իրականացվելիք նախատեսվող միջազգային ծրագրերի մշակմանը.
- 4) ապահովում է Կոմիտեում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդունելությունների կազմակերպման աշխատանքները.

Ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

10. Բաժնի պետը՝

1) ունի բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան եւ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Պետական դրամաշնորհների հաշվառման և հաշվետվությունների կազմման ու հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) **տիրապետում է ռուսերենին (ազատ) և անգլերենին կամ ֆրանսերենին (ազատ):**

6) տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (ցանկեր N 1-2):

Աշխատավարձը՝ 256.623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) դրամ:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

* * *

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
 - արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.
 - մեկ լուսանկար 3x4սմ չափի,
 - անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
 - սոց.քարտի պատճենը:

Ընտրություն կատարելու եղանակը՝

դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն և հարցազրույց:

Փաստաթղթերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնում կամ էլեկտրոնային փոստի միջոցով info@forestcommittee.am հասցեով ժամը 10⁰⁰-ից 13⁰⁰-ը ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից

Հասցե՝ ք. Երևան, Արմենակյան 129 (3-րդ հարկ),
հեռ.՝ [010 650 966](tel:010650966),

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ [07.02.2022թ.](#):